ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՄ-05

ք. Երևան «16» հունվարի 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արմենակ Խաչատրյանի (այսուհետ՝ Աշխատակազմ), որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային Կազմակերպությունը՝ ի դեմս տնօրեն Գոռ Ծառուկյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի, 03 խմբի, 03 դասի, «1091.Հանրային իրազեկում» ծրագրի, «11001.Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն Պայմանագրով Աշխատակազմը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով ՝ մինչև 785 487 600 (յոթ հարյուր ութսունհինգ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ դրամաշնորհի գումար (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով, Որոշմամբ հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ համաձայն Հավելված N 3-ի, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն Պայմանագրի N1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Աշխատակազմն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.1.5 Կազմակերպությունից պահանջել ներկայացնելու Ծրագրի կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը և տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 2-ը, ինչպես նաև հաշվետվություն դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը:

Ներկայացվող հաշվետվությունների համար ուղեցույց են հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N254-Ն հրամանով հաստատված Հ-2, Հ-8 ձևերը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Աշխատակազմի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Աշխատակազմի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Աշխատակազմը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.3. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Աշխատակազմի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Աշխատակազմի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն Պայմանագրով սահմանված կարգով Աշխատակազմ ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Աշխատակազմի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Աշխատակազմի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է՝ Աշխատակազմի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Աշխատակազմին ներկայացնել տեղեկություններ Պայմանագրի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ավելացված արժեքի հարկի գումարների վերաբերյալ:

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրով նախատեսված Միջոցառումների տարեկան արդյունքները Աշխատակազմի կողմից ընդունվելուց հետո Կազմակերպությունը Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2027թ. հունվարի 24-ը:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է Աշխատակազմի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ՝ համաձայն N 4 հավելվածի:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը Աշխատակազմին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

3.2 Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Աշխատակազմը Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

3.3 Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Աշխատակազմը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Աշխատակազմը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Աշխատակազմը չի ընդունում Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Աշխատակազմը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա համար, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը, դուրս է գրում հարկային հաշիվ և տրամադրում է հանձնման-ընդունման ակտ

կատարված աշխատանքների համար: Հարկային հաշվի գումարը, սույն Պայմանագրով սահմանված դրամաշնորհի գումարի հաշվին, հաշվարկվում է Կազմակերպության տվյալ ամսվա փաստացի (հաշվեգրված) կատարված ծախսերի չափով: Տարեկան կտրվածքով հարկային հաշիվների հանրագումարը չի կարող գերազանցել 1.1 կետում նշված գումարը:

4.2. Կազմակերպությանը վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, յուրաքանչյուր ամիս՝ 1.1 կետով սահմանված ամսական համամասնությամբ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Միջոցառմանը չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Աշխատակազմի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Աշխատակազմի կողմից Պայմանագրի 3.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

6.2. Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն Պայմանագրի համար 1-ից 4-րդ հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի Կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 _____ /ստորագրություն/ Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 44 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 _____ /ստորագրություն/ Կ. Տ.

Հավելված 1
2026թ. _____ ____ -ին
կնքված N ԴՄ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ	Կառավարության գործունեության լուսաբանում, թեմատիկ վերլուծություններ և ՀԼՄ-ների ամենօրյա մշտադիտարկում	Հայաստանյան և միջազգային ՀԼՄ-ների, սոցցանցային տիրույթի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով, ամփոփագրերի և ներքաղաքական թեմատիկ տեղեկանքների, հոդվածների պատրաստում /հատ	600	31.12.2026թ.	Եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը տարեկան հաշվետվությունը՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 2-ը	785 487 600
2			Սոցիալական հարթակներում Կառավարության պաշտոնական էջերի կառավարում (տեսանյութեր, ուղիղ եթեր հեռարձակումներ, լուսաբանող հաղորդումներ, գրառումներ/հատ)	2700			
3			ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների և միջազգային թեմաների վերաբերյալ քաղաքական ամփոփագրերի, վերլուծությունների պատրաստում/հատ	280			
4			Տարածաշրջանային ընթացիկ զարգացումների վերաբերյալ թեմատիկ տեղեկանքների պատրաստում/հատ	30			
5			Հայերեն, ռուսերեն, թուրքերեն լեզուներով կայքերի վարում, տարածաշրջանային հիմնախնդիրների առնչությամբ հրապարակային գործունեության ծավալում (հոդվածներ, զեկույցներ, հարցազրույցներ, մեկնաբանություններ, ասուլիսներ)/հատ	12000			
6			Օրբելի վերլուծական ծառայության հետազոտություններ, հոդված/հարցազրույց/հատ	150			
7			Հակահայկական քարոզչության վերաբերյալ կատարված վերլուծությունների ներկայացում, թեմատիկ տեղեկանքներ, հարցազրույցներ, հոդվածներ /հատ	750			
8			Սփյուռքին առնչվող, «Հայերն այսօր» էլեկտրոնային հարթակում հրապարակվող տեղեկատվական նյութեր/հատ	1000			
9			Կառավարության բարեփոխումների, սուբվենցիոն ծրագրերի թարմացում պետաջակցության կայքում և հավելվածում, իրազեկման արշավների իրականացում,	400			

			անիմացիոն հոլովակների պատրաստում (հատ)				
10			Ֆիլմաշարի («Մեր ժամանակների հերոսը»), հաղորդաշարերի («Արձակուրդը Հայաստանում», «Ընտրիր հայկականը») պատրաստում/ հատ	100			
11			Սոցիալ-տնտեսական թեմաներով օրական և թեմատիկ ամփոփագրերի, վերլուծական հոդվածների պատրաստում, կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի մոնիթորինգ, խորհրդատվական տեղեկանքների պատրաստում/հատ	700			
12			Համաժողովների, խորհրդաժողովների, քննարկումների, մեդիատուրերի կազմակերպում	20			
13			ՀՀ շահերի տեսանկյունից կարևոր թեմաների վերաբերյալ վերլուծությունների, զեկույցների, հոլովակների պատրաստում (հատ)	30			
14			Սահմանված գործառույթների իրականացման պարբերականություն, օր	ամենօրյա			
15			Հանրության իրազեկում/տոկոս	100			
	Ընդամենը						785 487 600

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 /ստորագրություն/ Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 44 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 /ստորագրություն/ Կ. Տ.

Հավելված 2
2026թ. _____ ____ -ին
կնքված N ԴՄ պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հավելված 3
2026թ. հունվարի 16 -ին
կնքված N ԴՄ-05 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Միջոցառման																	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Տնտեսագիտական դասակարգման հոդվածը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999	Հանրային իրազեկում և հասարակական - քաղաքագիտական հետազոտություններ	4637 - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	65 456 665	130 913 332	196 370 000	261 826 665	327 283 332	392 740 000	457 554 834	522 369 667	587 184 500	653 285 534	719 386 567	785 487 600	785 487 600

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018406 ՀՎՀՀ 02505554 /ստորագրություն/ Կ.Տ.	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 44 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018005695 ՀՎՀՀ 00257466 /ստորագրություն/ Կ. Տ.

Հավելված 4
2026թ. _____ ____ -ին
կնքված N ԴՄ պայմանագրի

Կազմակերպություն	Աշխատակազմ
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Աշխատակազմը և Կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.